ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀՀ կառավարությունում կայացած ՀՀ կրթության տեսչական մարմնի խորհրդի նիստ

ք.Երևան

26 հունիսի 2018թ.

Ժամը 17[00]

Մասնակիցներ

Ա. Հարությունյան	- ՀՀ կրթության և գիտության նախարար (խորհրդի նախագահ)
Հ. Այվազյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Ա. Բաբայան	- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ
Ա. Ասատրյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Ա. Հայրապետյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ս. Ալոյան	- «Դասարան» կրթական ծրագրի հիմնադիր նախագահ
Բ. Փափազյան	- «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի խորհրդի անդամ
Ա. Բախշյան	- «Հանրային դիվանագիտություն» հասարակական կազմակերպության նախագահի կրթության հարցերով խորհրդական
Թ. Ավակյան	- «Դասավանդիր, Հայաստան» կրթական հիմնադրամի ծրագրի գլխավոր տնօրեն

Հրավիրվածներ

Ալ. Շագաֆյան	- ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավար
Տ. Հակոբյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ
Ա. Ասոյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ

Ներկա է

Ա. Գևորգյան	- Կառավարման խորհրդի քարտուղար

ՕՐԱԿԱՐԳ

Հարց 1

ՀՀ վարչապետին ներկայացնելու նպատակով ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնում նշանակելու համար Ալեքսանդր Շագաֆյանի թեկնածության քննարկում:

Ներկայացնող՝ **Ա. Հարությունյան**

Խորհրդի նիստը վարող ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Հարությունյանը խորհրդի հաստատմանը ներկայացրեց օրակարգը, որում ընդգրված էր մեկ հարց. հավանություն տալ ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնում Ալեքսանդր Շագաֆյանի թեկնածությանը և ներկայացնել ՀՀ վարչապետին:

Խորհրդի անդամների կողմից օրակարգը հաստատվեց ՄԻԱՁԱՅՆ:

ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Հարությունյանը խոսքը տրամադրեց Ալեքսանդր Շագաֆյանին:

ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի թեկնածուն հակիրճ ներկայացրեց իր աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկատվություն՝ նշելով, որ 2017 թվականի նոյեմբերի 17-ից մինչև 2018 թվականի հունվար ամիսն իրականացվել են ՀՀ ԿԳՆ կրթության պետական տեսչության ՀՀ ԿԳՆ կրթության տեսչական մարմնի անցումն ապահովող աշխատանքներ: Կազմվել են տեսչական մարմնի ծառայողների պաշտոնների անձնագրերը, վարչությունների և բաժինների կանոնադրությունները:

Սույն թվականի հունվարի 15-ից լրամշակվել են ՀՀ ԿԳՆ կրթության տեսչական մարմնի ստուգաթերթերը, ռիսկի գնահատման մեթոդաբանությունը, իրականացվել է վերջիններիս փորձարկումներն ուսումնական հաստատություններում: Նախագծվել և նախնական գործարկման է դրվել տեսչական մարմնի պաշտոնական կայքը՝ www.eib.am:

Տեսչական մարմինը նշված ժամանակահատվածում զբաղվել է նաև բազմաթիվ դիմում-բողոքների ուսումնասիրությամբ, ինչպես նաև իրականացրել աշխատանքներ կրթության ոլորտում ռիսկերի կառավարման, ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների պահպանման, կանխարգելիչ միջոցառումների իրականացման ուղղությամբ:

Թեկնածուն ներկայացրեց նաև իր տեսլականը կառույցի վերաբերյալ: Ըստ Ա. Շագաֆյանի՝ կրթության տեսչական մարմինն այն կառույցն է լինելու, որն իր ամենօրյա գործունեությամբ բացահայտելու և կենտրոնանալու է կրթության ոլորտի մեծ խնդիրների

վրա, իր ուսումնասիրություններով և ստուգումներով, վերլուծական կարողություններով փորձելու է պարզել դրանց պատճառներն ու ազդեցությունը: Կրթության տեսչական մարմինն իր ռեսուրսների և կարողությունների զգալի մասը ուղղելու է խնդիրների կանխարգելմանն ու խորհրդատվությանը՝ հանդես գալով կրթության քաղաքականություն մշակող լիազոր մարմնին ոլորտի քաղաքականության բարելավման առաջարկություններով:

Խորհրդի նախագահի առաջարկով խորհրդի անդամներն իրենց հարցերն ուղղեցին տեսչական մարմնի ղեկավարի թեկնածուին:

Ա. Բախշյանը, դիմելով թեկնածուին նշեց, որ 6 ամիս ղեկավար աշխատելով, ի՞նչ կարծիք ունի տեսչական մարմնի ծառայողների մասին, շարունակելու՞ են պաշտոնավարել տեսչական մարմնի ղեկավարի տեղակալները և կա՞ արդյոք կադրերի վերանայման կարիք:

Ա. Շագաֆյանը նշեց, որ կրթության տեսչական մարմնի ծառայողները բանիմաց մասնագետներ են, սակայն տեսչական մարմնի բոլոր աշխատակիցներն էլ մշտապես ինքնազարգանալու և նոր կոմպետենցիաներ ձեռք բերելու անհաժեշտություն ունեն: Ինչ վերաբերում է տեղակալների հետագա պաշտոնավարմանը, ապա համապատասխան առաջարկություններով հանդես կգա միայն իր նշանակումից հետո:

Ա. Հայրապետյանը հարցրեց, թե ի՞նչ ձևով է առաջադրվել թեկնածուն և բավարարու՞մ է արդյոք պահանջվող մասնագիտական ստաժը:

Ա. Շագաֆյանը նշեց, որ ՀՀ ԿԳՆ կրթության տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնում իր թեկնածությունն առաջադրվել է նախորդ տարվա նոյեմբեր ամսին, և վերջին 10 տարում իր ունեցած մասնագիտական ստաժը համապատասխանում է «Տեսչական մարմնինների մասին» ՀՀ օրենքի պահանջին:

Խորհրդի անդամները մտքեր փոխանակեցին ոլորտում առկա խնդիրների և դրանց լուծման ճանապարհների վերաբերյալ:

Ամփոփելով նիստը՝ կառավարման խորհրդի նախագահ Ա. Հարությունյանը Ա. Շագաֆյանի թեկնածությունը դրեց քվեարկության:

Խորհուրդը միաձայն որոշեց հավանություն տալ Ալեքսանդր Շագաֆյանի թեկնածությանը և ներկայացնել ՀՀ վարչապետին՝ ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնում նշանակվելու համար:

ՀՀ կրթության և գիտության նախարար, խորհրդի նախագահ

Ա.Հարությունյան

ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար, խորհրդի անդամ

Հ.Այվազյան

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ, խորհրդի անդամ

Ա.Բաբայան

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, խորհրդի անդամ

Ա. Ասատրյան

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ, խորհրդի անդամ

Ա. Հայրապետյան

«Դասարան» կրթական ծրագրի հիմնադիր նախագահ, խորհրդի անդամ

Ս.Ալոյան

«Թումո» սեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի տնօրեն, խորհրդի անդամ

Բ. Փափազյան

«Հանրային դիվանագիտություն» ՀԿ-ի կրթության հարցերով խորհրդական, խորհրդի անդամ

Ա. Բախշյան

«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի ծրագրի գլխավոր տնօրեն, խորհրդի անդամ

Թ.Ավակյան

ՀՀ ԿԳՆ ԿՏՄ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետ, խորհրդի քարտուղար

Ա.Գևորգյան